№ 156 Սեպտեմբերի 6 (18) 1880 Սեպտեմբերի 6 (18) № 156

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ:—Ներքին տեսութիւն: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Հայաստան:—«Մշակի» հեռագիրներ: —Յայտարարութիւններ: — Բանասիրական: Մօսկվայի և Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիների կալուածական խնդիրը:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

—

Արևելեան խնդիրը դարձեալ վճռված չէ: Եւրոպական պետութիւնների պահանջները Բ. Դուռը մինչև այժմ չէ կատարում: Պետութիւնների ծովային ցոյցը օրից օր սպասվում է: Ոչ Չերնոգորիայի, ոչ Յունաստանի, ոչ էլ Հայաստանի խնդիրը վերջնական լուծումն չեն ստանում:

Բ. Դուռը կարծում է թէ կը բաւականացնի եւրոպական պետութիւններին նրանով, որ փոխել է իր մինիստրութիւնը: Արտաքին գործերի երևելի մինիստր Աբէդդին-փաշան, այդ մահմետական ալբանացին, հայերի այդ թշնամին, ընկաւ և նրա տեղը նշանակված է մէկ ինչ որ Օսիմ-փաշա: Դրանից ի հարկէ, գործերի դրութիւնը չի փոխվի: Թիւրքիայի մէջ մինիստրների փոխվելը ոչինչ նշանակութիւն չունի. այս ինչ փաշայի տեղ այն ինչ փաշա է նշանակվում, բայց ոչ մինը նրանցից մի յայտնի կուսակցութիւն, մի յայտնի ուղղութիւն, քաղաքականութեան մի յայտնի գաղափար չէ ներկայացնում....

Ալբանեան միութիւնը քանդված է, այն միութիւնը, որ Թիւրքաց կառավարութիւնը ինքըն գաղտնի կերպով կազմակերպել էր, որպէս զի ընդդիմադրի Չերնոգորիայի պահանջներին: Այդ ալբանեան միութիւնը դեռ մնացորդ էր Բիկոնսֆիլդի մինիստրութեան թիւրքասէր ուղղութեան ներգործութեան:

Այժմ, երբ եւրոպական Թիւրքիայում չաջողվեցաւ մի մահմետական զինաւորված միութեան կազմակերպութեան պահպանելը, Բ. Դուռը մտածում է աջողեցնել նոյն տեսակ միութիւն իր ասիական երկիրների մէջ, այն է Հայաստանում: Այդտեղ Թիւրքիան, ինչպէս լրագիրները հաղորդում են, դիտաւորութիւն ունի հաստատել մի քրդական միութիւն, որպէս զի նրանով ընդդիմադրի Հայաստանի քրիստոնեայ բնակիչների պահանջներին ու նրանց ձգտումներին:

Բայց «Голосъ» լրագիրը շատ ուղիղ է նկատում, որ քրդական լիգա աւելի էլ դժուար է կազմակերպել, քան թէ ալբանական լիգա: Թէև ալբանացիները նոյնքան վայրենի ցեղ են, որքան քրդերը, բայց նրանց մէջ դարձեալ աւելի համերաշխութիւն կայ, այն ինչ քրդերի ցեղերը միմեանց մէջ թշնամի, միմեանց մէջ ոչինչ համերաշխութիւն չունեցող ցեղեր են, որոնք աւելի էլ թափառական կեանք են վարում, քան թէ ալբանացիները:

Քրդական լիգայի մասին անգլիական համայնքների ժողովի մէջ արդէն հարցում եղաւ: Դիլկ յայտնեց որ եթէ քրդական միութիւնը կազմակերպված է Հայաստանի քրիստոնեաների դէմ, Անգլիան պէտք է բողոքի Թիւրքիայի այդ տեսակ քաղաքականութեան դէմ:

Ասում են որ Հայաստանում նշանաւոր շարժում կայ, որ Հայաստանի այլ և այլ տեղերում երևեցան հայերի զինաւորված խմբեր, որոնք գործում են քրդերի դէմ:

Ճշգրապէս այդ մասին մենք դեռ ևս տեղեկութիւն չունենք: Միայն հաստատ կարելի է ասել, որ եթէ այդ լուրը մասամբ էլ ստուգվի, Թիւրքաց հայերի ձեռքով զէնքի բարձրացնելը աւելի կառաջացնի հայոց խնդիրը, քան թէ նրանց ամենազօրեղ գրաւոր բողոքներ Թիւրքերի և քրդերի հարստահարութեան դէմ:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԲՈՐՉԱԼՈՒԻՑ մեզ հաղորդում են: Այստեղ չէնց որ ծառերը կանաչում են և բոլոր թուրք ազգա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄՕՍԿՎԱՅԻ ԵՒ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

—

«Голосъ» լրագրի № 229 բանասիրականի մասնում, իշխան Բեհբուտովի ստորագրութեամբ, տպվեցաւ մի յօդուած, որի մէջ նկարագրված էր Մօսկվայի և Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիների միլիօնաւոր արժէք ունեցող կալուածքների այժմեան աննախանձելի դրութիւնը, նրանց արդիւնքների վատնումը և տեղային հայ հասարակութեան դժգոհութիւնները այդ կալուածքները կառավարող և նրանց հոգաբարձու իշխան Աբամելիքի դէմ:

Իր յօդուածի սկզբում պատուելի հեղինակը, խօսելով առհասարակ բոլոր դաւանութիւններին պատկանող եկեղեցիների տնտեսութեան վրա, յայտնում է այն միտքը, թէ եկեղեցական գումարների, եկեղեցական կալուածքների կառավարութիւնը Ռուսաստանում գտնվում է միօրինակ անկարգութեան մէջ, ամեն տեղ նկատվում են մի և նոյն անհաշիւ, անպայման վատնումները: Պատերազմի մէջ գլխաւոր հրամանատարի դրամական կարգադրութիւնները, ասում է հեղինակը, կօնտրօլի են ենթարկվում, բայց եկեղեցու երեցփոխանը միշտ մնում է անհաշիւ տէր եկեղեցական գումարների: Աւելի խաբէական ձև է ստանում առանց կօնտրօլի տնտեսութիւնը, երբ նա ծածկվում է կեղծ հաշւատուութեան մէջ: Իրերի այդ ընթացքը առաջ է գալիս մի կողմից ծխական ժողովրդի անտարբերութիւնից, միւս կողմից, հոգևորականների աչառութիւնից, որոնց ամենալաւ ներկայացուցիչները անկարող են լինում հակառակել եկեղեցական երեցփոխանների ինքնիշխանութեան դէմ: Այդ բոլոր բողոքները հանդիպում են այն անձինքների կամակորութեանը, որոնք ունեն առանձին շահեր չէին, աւանդական կարգերի պահպանելու մէջ: Իսկ թէ որքան նպաստաւոր են այդ կարգերը եկեղեցու շահերի համար—յայտնի է ամենին և մեզանից իւրաքանչիւրին: Այդ կարևոր հարցը թէ ուղղափառ եկեղեցու և թէ այլ դաւանութիւնների վերաբերութեամբ ընդհանուր նշանակութիւն ունի: Այդ մենք տեսնում ենք լրագրական տեղեկութիւններից, թէ որպէս ծխական ժողովրդի կռիւը երեցփոխանների ինքնակամութեան դէմ միշտ մնում է ապարդիւն: Մի այսպիսի կռիւ սկսեց, ի թիւս այլոց, Մօսկվայի և Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիների ծխական ժողովուրդը, որ իրաւացի կերպով ցանկանում էր իր եկեղեցիների մեծագումար արժէք ունեցող կայքերը ազատել անհաշիւ տնտեսութեան վատնումներից:

Այնուհետև պատ. հեղինակը, կամենում է բացատրել, թէ ինչու մայրաքաղաքների հայոց եկեղեցիների կայքերը, հակառակ եկեղեցու դարևոր աւանդութեան, հակառակ ժողովրդի և բարձր հոգևոր իշխանութեան կամքի, կառավարվում են մասնաւոր անձինքների ձեռքով, առանց հասարակութեան մասնակցութեան: Այդ առիթով նա դիմում է յիշեալ եկեղեցիների հիմնարկութեան պատմութեանը:

«Անցեալ դարու եօթանասուն երրորդ թւականների սկզբում, Եկատերինա II կայսրուհու արքունի ակնավաճառ (ювелиръ) Յովհաննէս Լազարեանը, մի քանի այլ հայերի հետ խնդրեցին, որ թոյլ տրվի նրանց Մօսկվայում և Ս. Պետերբուրգում հիմնել եկեղեցիներ, որ իրանց կրօնի համեմատ ժամասացութիւն կատարվի: Գրվեցաւ բարձրագոյն հրովարտակ, որով թոյլ էր տրվում յիշեալ շէնքերի կառուցումը, և հրամայված էր պօլիցիային ցոյց տալ շէնքերի համար յարմարաւոր տեղեր: Ամենաողորմած Կայսրուհու շնորհած հողերի վրա շինվեցան եկեղեցիները, կամաւոր նուիրատուութիւններով, որոց մէջ նշանաւոր մասը պատկանում էր յիշեալ ակնավաճառին:»

«Ս. Պետերբուրգի եկեղեցին կառուցանելու ժամանակ, Յովհաննէս Լազարեանը, հոգևոր իշխանութեան համաձայնութեամբ, շինեց եկեղեցական հողի վրա երկու քարաշէն տներ, այն պայմանով, որ նրանք պիտի դառնային եկեղեցու կատարեալ սեպհականութիւն, երբ նրանց եկամուտներից կը ստացվէր շինութեան վրա ծախսված գումարը: Բայց 1800 թւին Յովհաննէս Լազարեանը խնդիրքով դիմեց Էջմիածնի Յովսէփ կաթողիկոսին, յայտնելով, թէ իր դէպի եկեղեցին ունեցած ջերմեռանդութեան պատճառով, իր շինած տները նուիրում է յօգուտ Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիների: Այս խնդիրքի հետ նա ներկայացրեց կաթողիկոսի հաստատութեանը և այն դաշինքները, որոնք բովանդակում էին իրանց մէջ ընծայված տների կառավարելու պայմանները, թէ նրանց արդիւնքների և թէ հսկողութեան վերաբերութեամբ:

Պայմանները գլխաւորապէս էին հետևեալները.

Մինչև Յովհաննէս Լազարեանի և նրա կնոջ մահը կայքերը պէտք է մնային նրանց կառավարութեան ներքոյ: Բայց այդ երկուսի մահից յետոյ, այն տունը, որ եկեղեցուց դուրս գալու ժամանակ գտնվում է ձախ թևքի վրա, և նրան կից եղած շինութիւնները, այլ և միւս տան ներքի յարկում գտնված խանութները, որպէս և այն հողը որ գտնվում է սուրբ Յարութեան եկեղեցու մօտ,—բոլորը, բացի տան միջի զարդարանքներից և կահկարասիքից, պէտք է յանձնվէին եկեղեցու հոգաբարձուների կառավարութեանը, որոնք պէտք է լինէին չորս հոգի—մէկը Լազարեանների ժառանգներից, երկուսը հայազգի պատուաւոր անձինքներից, իսկ չորրորդը մի բարեմիտ հոգևորական: Ինչ որ վերաբերում է միւս տանը, որը եկեղեցուց դուրս գալու ժամանակ գտնվում է աջ թևքի վրա, այն ևս մի և նոյն պայմաններով պիտի տրվէր բնակութեան համար հիմնողի (Լազարեանի) ժառանգների երիցագոյնին արական սեռից մինչև երրորդ սերունդը, ի հարկէ, մի որոշ վարձով: Իսկ երբ տոհմային երեք սերունդները կանցնէին, այն ժամանակ և այս տունը պէտք է հաւասարվէր միւսներին, և նրա եկամուտների ու ծախսերի կառավարութիւնը պիտի կախված լինէր հոգաբարձուներից, միւս կայքերի պէս:

Այդ պայմանագիրը վաւերացած էր Վեհ. Կաթողիկոսից և առաջարկված Աստրախանի հայոց կօնսիստօրիային, որ արձանագրվի օրագրութեան մէջ և ընդունվի որպէս ձեռնարկ: Յիշեալ պայմանների պարտաւորեցուցիչ լինելը իր ժառանգների համար և ճշտութեամբ կատարելը Յովհաննէս Լազարեանը հաստատեց իր կտակով: Որովհետև նա զաւակներ չունէր, իր կտակի մէջ նշանակեց, որ եկեղեցական կալուածքները կառավարէ իր կինը, համաձայն այն կարգադրութիւնների, որ հաստատված էին հոգևոր իշխանութիւնից, իսկ իր եղբօրը զրկեց ժառանգութիւնից:

Յովհաննէս Լազարեանի մահից յետոյ նրա կինը և եղբայրները, ընդհանուր համաձայնութեամբ, հրաժարվեցան և այն իրաւունքներից, որ տրված էին հանգուցեալի ժառանգներին [illegible] կտակի և հոգևոր իշխանութեան հետ ունեցած պայմանի զօրութեամբ: Նրանք խնդրեցին Բարձրագոյն կառավարութեան, որ իրանցից և իրանց ժա-